

Հոկտեմբեր 31, 1978

Մեծայարգ  
Տիար Պարզեւ Խոճաճեան  
Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ  
Ժխական Խորհուրդի Ատենապետ  
Թորոնթօ.

Յարգելի Տիար Խոճաճեան,

Առաջնորդ Սրբազան Հայրը ստացած է Թորոնթոյի մէջ կազմուե-  
լիք երկրորդ ծուխի նախնական աշխատանքներով զբաղող եւ նշա-  
նակուած Յանձնախումբին կողմէ պատրաստուած շրջանի հայուլթեան  
ցանկը՝ որմէ օրինակ մը դրկուած է նաեւ ժխական Խորհուրդիդ:

Սրբազան Հայրը կը փափարի փութով ունենալ նաեւ ձեր պատ-  
րաստած ցանկը՝ որպէս զի երկրորդ ծուխի կազմակերպման աշխա-  
տանքները յառաջ տարուին:

Ձեզի եւ ժխական Խորհուրդիդ անդամներուն եկեղեցանդէր եւ  
ազգանուէր գործներուն կը մաղթենք յարատեւ յաջողութիւն:

Աղօթարար

Յատակ Ծ. Վրդ. Պաղտասեան  
Առաջնորդի Փոխանորդ